ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ -ն ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
6	Ղեկավարի գրասենյակային բազկաթոռ Նշանակությունը և կառուցվածքը՝ նախատեսված ղեկավարի գրասենյակային աշխատանքի համար, էրգոնոմիկ կառուցվածքով, փափուկ նստատեղով և թիկնակով, բազկակալներով, բարձրության և թիկնակի թեքության կարգավորման հնարավորությամբ, պտտվող և անիվավոր բազկաթոռ: Նստատեղը և թիկնակը՝ անատոմիական կառուցվածքով, բարձր խտության առաձգական փափուկ լցանյութով, երեսպատված որակյալ արհեստական կաշվով (էկոկաշի) կամ բնական կաշվով, գույնը սև: Երեսպատումը՝ շփման, քերծվածքների և առօրյա մեխանիկական ազդեցությունների նկատմամբ դիմացկուն, հեշտ մաքրվող: Թիկնակը՝ մեջքի և գոտկատեղի բնական կորություններին համապատասխանող, գոտկային հատվածի հենարանով՝ երկարատև նստած աշխատանքի ընթացքում հարմարավետության ապահովման համար: Ճոճման և թեքության կարգավորման մեխանիզմը՝ բազմաֆունկցիոնալ, Multiblock, Synchro կամ համարժեք գործառութային հնարավորություններով, ճոճման և թիկնակի թեքության անկյունը մի քանի դիրքերում ֆիքսելու հնարավորությամբ: Բարձրության կարգավորման մեխանիզմը՝ գազային ամբարձիչով (Gas Lift), Class 4 դասի կամ համարժեք ամրության և բեռնունակության ցուցանիշներով, նստատեղի բարձրության սահուն կարգավորման հնարավորությամբ: Բազկակալները՝ երկու հատ, ամուր մետաղական, փայտե կամ պոլիմերային հիմքով, վերին հատվածները՝ փափուկ լցանյութով և արհեստական կամ բնական կաշվով երեսպատված, կամ բարձրությամբ և դիրքով կարգավորվող (3D/4D)՝ պոլիուրեթանային հենման մակերեսով: Հենահիմքը՝ հնգաթև, ուժեղացված մետաղական կամ քրոմապատ մետաղական կառուցվածքով, 680 մմ տրամագծով, բազկաթոռի

	ծանրաբեռնվածության հավասարաչափ բաշխումն ու կայունությունն ապահովող։ Անիվները՝ 5 հատ, 360° պտտվող, պոլիուրեթանային (PU) ծածկույթով կամ համարժեք պաշտպանիչ հատկություններով, հատակի մակերեսը քերծվածքներից և վնասվածքներից պաշտպանող, սահուն և նվազագույն աղմուկով տեղաշարժ ապահովող։ Պտտման հնարավորությունը՝ նստատեղի պտտում ուղղահայաց առանցքի շուրջ՝ 360°։ Թույլատրելի բեռնվածությունը՝ 130 կգ։ Չափերը՝ • Բազկաթոռի ընդհանուր բարձրությունը՝ 1210 մմ։ • Նստատեղի բարձրությունը հատակից՝ 500 – 600 մմ (կարգավորվող գազլիֆտ մեխանիզմի շնորհիվ) ։ • Նստատեղի լայնությունը՝ 540 մմ ։ • Նստատեղի խորությունը՝ 510մմ ։ • Թիկնակի բարձրությունը՝ 740 մմ ։ • Բազկաթոռի ընդհանուր լայնությունը՝700մմ ։ Կառուցվածքի ամրությունը և կայունությունը՝ ամուր և հուսալի միացումներով, նախատեսված ամենօրյա գրասենյակային շահագործման համար, առանց կողմնակի ճռռոցների, մեխանիզմների խցանումների և կառուցվածքային դեֆորմացիաների։ Արտաքին տեսքը՝ հարթ և պատշաճ մշակված մակերեսներով, առանց ճաքերի, պատռվածքների, քերծվածքների, երեսպատման վնասվածքների և այլ տեսանելի թերությունների։ Ընդհանուր պահանջները՝ նոր, չօգտագործված, գործարանային արտադրության, հավաքման և շահագործման համար անհրաժեշտ բոլոր կցամասերով, ամրակներով և պարագաներով։ Մատակարարման պայմանները՝ ապրանքի մատակարարումը, բեռնաթափումը, հավաքումը (եթե ապրանքը ունի հավաքման կարիք) և տեղադրումը համապատասխան սենյակում կամ պահեստում, ինչպես նաև կարգաբերումները իրականացվում է Վաճառողի ուժերով և իր միջոցների հաշվին։ Երաշխիքային ժամկետը՝ 365օր։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«ДОМУС» ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
6	Офисное кресло руководителя. Назначение и конструкция: разработано для работы в кабинете руководителя, имеет эргономичную конструкцию, мягкое сиденье и спинку, подлокотники, регулировку высоты и наклона спинки, поворотное и колесное крепление. Сиденье и спинка: анатомической формы, с высокоплотным эластичным мягким наполнителем, обиты высококачественной искусственной кожей (экокожей) или натуральной кожей черного цвета. Обивка: устойчива к трению, царапинам и повседневным механическим воздействиям, легко чистится. Спинка: повторяет естественные изгибы спины и поясницы, с поясничной поддержкой для обеспечения комфорта при длительном сидении. Механизм наклона и регулировки наклона: многофункциональный, Multiblock, Synchro или эквивалентный, с возможностью фиксации угла наклона и спинки в нескольких положениях. Механизм регулировки высоты: газлифт, класс 4 или эквивалентная прочность и грузоподъемность, с возможностью плавной регулировки высоты сиденья. Подлокотники: два, с прочным металлическим, деревянным или полимерным основанием, верхняя часть обтянута мягким наполнителем и искусственной или натуральной кожей, или с регулируемой по высоте и положению (3D/4D) полиуретановой опорной поверхностью. Основание: пятилучевая, усиленная металлическая или хромированная металлическая конструкция диаметром 680 мм, обеспечивающая равномерное распределение нагрузки и устойчивость кресла. Колеса: 5 шт., вращающиеся на 360°, с полиуретановым (ПУ) покрытием или эквивалентными защитными свойствами, защищающими поверхность пола от царапин и повреждений, обеспечивающими плавное и

	бесшумное движение. Возможность вращения: вращение сиденья вокруг вертикальной оси: 360°. Допустимая нагрузка: 130 кг. Габариты: • Общая высота кресла: 1210 мм. • Высота сиденья от пола: 500 - 600 мм (за счет регулируемого газового подъемника). • Ширина сиденья: 540 мм. • Глубина сиденья: 510 мм. • Высота спинки: 740 мм. • Общая ширина кресла: 700 мм. Прочность и устойчивость конструкции: с прочными и надежными соединениями, предназначенными для ежедневного использования в офисе, без скрипов, заклинивания механизмов и структурных деформаций. Внешний вид: с гладкими и качественно обработанными поверхностями, без трещин, разрывов, царапин, повреждений покрытия и других видимых дефектов. Общие требования: новое, неиспользованное, заводское, со всей фурнитурой, крепежными элементами и принадлежностями, необходимыми для сборки и эксплуатации. Условия поставки: доставка товара, разгрузка, сборка (если товар требует сборки) и установка в соответствующем помещении или на складе, а также регулировки осуществляются Продавцом за свой счет. Гарантийный срок: 365 дней.